

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Սույն թվականի սեպտեմբերի 9-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ ճեմարանի 1989—1990 ուսումնական տարեշրջանի բացման հանդիսությունը՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սիոն արքեպս. Մանուկյանը, Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը, Մայրավանքի պաշտոնեությունը և այլ հյուրեր:

Հանդիսությանը ներկա էին նաև Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ս. Վարդանյանն ու տեղակալ Ռ. Զարգարյանը:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո հնչեց Հայաստանի պետական հիմնը: Այնուհետև ճեմարանի սաները խանդավառությամբ երգեցին «Ճեմարանի քայլերգը»: Քայլերգից հետո ճեմարանի երգչախումբը կատարեց Արևելցու «Որք զարդարեցին» ու Ճնորհալի Հայրապետի «Այսօր Երկնայինքն» և «Յաղթող և զնոր օրհնութիւն» շարականները:

Բուրվառակրի ու մոմակիրների ուղեկցությամբ, Ավետարանը ձեռքին, հանդիսությունների դահլիճ մտավ Տ. Սեպուհ աբղ. Զուլջյանը և ընթերցեց Սերմնացանի առակը (Մատթ. ԺԳ 4—9):

Ավետարանի ընթերցումից հետո ճեմարանի երգչախումբը կատարեց «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը:

Ուսումնական տարվա վերաբացման առթիվ նախորդ ուսումնական տարվա ձեռքբերումների ու նոր ակնկալիքների մասին խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը:

Այնուհետև ճեմարանի դասախոսական կազմին ու ուսանողությանն ուղղված իր օրհնության ու բարի մաղթանքների խոսքը հղեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունն իր խոսքում անդրադարձավ երկրաշարժից հետո հայ ժողովրդի ներկա վիճակին՝ գոհունակությամբ նշելով ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության բերած նպաստը աղետյալներին օգնելու հարցում, ապա, անդրադառնալով վերջին տարիներին սկիզբ առած կրոնական-եկեղեցական վերազարթոնքին, նշեց. «Անցած տարվա ընթացքում մենք 12 եկեղեցիներ ենք բացել Հայաստանի տարբեր շրջաններում, Արցախում, Լենինգրադում և այլն: Իսկ մոտ ապագայում ևս 15 եկեղե-

ցիներ պիտի վերաբացվեն: Ընձեռված հնարավորությունները ավելացնում են մեր պարտականությունները, նոր պարտականություններ են դնում մեր ուսերին»: Այնուհետև Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ այսուհետև ոչ միայն անհրաժեշտ են ծիսակատար քահանաներ, այլև այնպիսի հոգևորականներ, որոնք կարողանան բավարարել իր հայացքը դեպի Եկեղեցի դարձրած մեր ժողովրդի հոգևոր պահանջները ու ակնկալիքները: «Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի յուրաքանչյուր ուսանող այս գիտակցությամբ պիտի պատրաստվի իր ապագա հոգևոր առաքելությանը», ընդգծեց Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոգևոր ճեմարանի 1989—1990 նոր ուսումնական տարվա բացման հանդիսությունը ավարտվեց խմբովին երգված «Հայր մեր»-ով և Նորին Սրբության «Պահպանիչ»-ով: